ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռի Դիւանս լիազօրուած է ուրախութեամբ աւետելու մեր Սուրբ Եկեղեցուն և հաւատացեալ ժողովրդին, որ մեր երկրում, բարենպաստ օրինական պայմանների բերումով, մինչև այժմ գործող վանքերի և եկեղեցիների շարքին, վերջին մի տարուայ ընթացքում վերաբացուել են հետևեալ վանքերն ու եկեղեցիները Հայաստանում և Արցախում.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.—

Ա. **Արարատեան թեմ**

1. Հոկտեմբերեանի շրջանի Բամբակաշատ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին (ԺԹ դար):
2. Մարտունի քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցին (ԺԷ դար):

Բ. **Շիրակի թեմ**

1. Իջևանի շրջանում՝ Մակարավանքը (1205 թ.):
2. Սպիտակի շրջանի Լեռնանցք գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին (ԺԸ դար):

Գ. **Սիւնեաց թեմ**

1. Գորիսի շրջանում՝ Տաթևի վանքը (Ժ դար):
2. Մեղրի քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցին (ԺԷ դար):

ԱՐՑԱԽՈՒՄ.—

1. Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ վանքը (1238 թ.):
2. Ամարասի Ս. Գրիգորիս վանքը (Դ դար):
3. Մարտակերտի Ս. Կարապետ եկեղեցին (1883 թ.):
4. Հադրութի Ս. Յարութիւն եկեղեցին (1671 թ.):

Վերոյիշեալ նորաբաց սրբավայրերը ապահովում են երիտասարդ հովիւներով: Նորահաստատ Սիւնեաց թեմի առաջնորդ է նշանակուած Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակէսեանը՝ կենտրոն ունենալով Գորիս քաղաքը, իսկ Արցախի եկեղեցիները գտնուում են տեսչութեանը ներքոյ Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսեանի՝ կենտրոն ունենալով Ստեփանակերտ քաղաքը:

Սկսուել են արդէն յիշեալ վանքերի ու եկեղեցիների նորոգութեանց և բարեկարգման աշխատանքները:

Վերաբացուել և գործում է նաև Լենինգրադի Ս. Յարութիւն եկեղեցին:

Օրինական ձևակերպումների ընթացքի մէջ են ու մօտ ապագայում կը վերաբացուեն ևս շուրջ տասներկու եկեղեցիներ Հայաստանում, Արցախում և Վրաստանում:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
3 Յուլիսի 1989 թ.